ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 58-Ա

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է,

Հաստատել 24 դեկտեմբերի 2019 թվականի Լեռնապատ համայնքի ավագանու թիվ 09 նիստի օրակարգը ըստ հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3' ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. .ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5 . ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված

Լեռնապատ համայնքի ավագանու

24 դեկտեմբերի 2019 թվականի 58-Ա որոշման

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ Հ Ա Ս Տ Ա Տ Ե Լ Ո Ւ  Մ Ա Ս Ի Ն
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. *ԼԵՌՆԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
7. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8. ԼԵՌՆԱՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-041-0022-0001 ԾԱԾԿԱԳՐԻՑ 0,10039 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ
9. ԼԵՌՆԱՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-041-0022-0001 ԾԱԾԿԱԳՐԻՑ 0,1994 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ, 27փ. 7/6 հեռ. (0322)68781, lernapat.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 59-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<< Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 37-րդ հոդվածով

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի 1-ի:
2. Հաստատել Լեռնապատ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատ համայնքի ավագանու 2019թ.-ի նոյեմբերի 14-ի <<Լեռնապատ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N57-Ա և 2019թ.-ի հուլիսի 03-ի <<Լեռնապատ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> N27-Ա որոշումները:
4. *Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020թ-ի հունվարի 01-ից:*

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3' ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. .ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5 . ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված 1
Լեռնապատ համայնքի ավագանու
24.12.2019թ.-ի N59-Ա որոշման

# ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. *Աշխատակիցների թվաքանակը՝ 18 ։*
2. *Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ հազ. դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 280.0 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 149,0 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 120.0 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 148,0 |
| Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 145.0 |
| Առաջատար մասնագետ | 1 | 145.0 |
| 1-ին կարգի մասնագետ | 3 | 127,0 |
| 2-րդ կարգի մասնագետ | 1 | 125,0 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄ | | |
| Հավաքարար | 1 | 90,0 |
| Պահակ | 1 | 108,0 |
| Պահակ | 1 | 92,7 |
| Վարորդ | 1 | 120,0 |
| Վարորդ ավտոբուսի | 1 | 120,0 |
| Վարորդ բեռնատար ավտոմեքենայի | 1 | 160,0 |
| Պայմանագրային աշխատող | 1 | 100,0 |
| Տրակտորիստ մեխանիզատոր | 1 | 92,7 |
| ընդամենը | 18 | |

Համայնքի ղեկավար Ս. Աբազյան

Հավելված 2

Լեռնապատ համայնքի ավագանու

24.12..2019թ.-ի N59-Ա որոշման

ԼԵՌՆԱՊԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ

1. *Աշխատակիցների թվաքանակը՝ 7 :*
2. *Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝*

| Հաստիքների անվանումները | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ հազ. դրամ/ |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 115,0 |
| Հաշվապահ | 0,5 | 92,7 |
| Դաստիարակ | 1,12 | 100,0 |
| Դաստիարակի օգնական | 1 | 89,7 |
| Խոհարար | 1 | 89,7 |
| Բուժքույր | 0,5 | 89,7 |
| Պահակ | 1 | 89,7 |
| Ընդամենը | 6,87 | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 60-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով,<<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, 23 հոդվածի 5 կետով՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնքում 2020թ.-ի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման նախագիծը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3' ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. .ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5 . ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 24 -ի թիվ 60 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ**,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար դրամ,**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ,**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հարյուր հազար դրամ**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեք հազար դրամ**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար** դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **երեք հազար դրամ**, (

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ**.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երեսուն հազար դրամ**.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **քսանհինգ հազար դրամ**.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար դրամ**,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասը հազար մեկ դրամ**,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներեք հազար մեկ դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսան հազար մեկ դրամ**,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանհինգ հազար մեկ դրամ**,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար **դրամ**.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար դրամ**,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասը հազար մեկ դրամ**,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներեք հազար մեկ դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսան հազար մեկ դրամ**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանհինգ հազար մեկ դրամ**.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քառասունհինգ հազար մեկ դրամ**.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝

բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **երեք հարյուր հիսուն դրամ**՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար **դրամ**,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **քսանհինգ հազար դրամ**,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հազար դրամ**

դ. խաղատների համար՝ **հինգ հարյուր հազար դրամ**,

ե. շահումով խաղերի համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ**

զ. վիճակախաղերի համար՝ **հարյուր հազար դրամ**.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ**,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար մեկ դրամ**,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար դրամ, մեկ դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսան հազար մեկ դրամ**,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեսուն հազար մեկ դրամ**.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հարյուր դրամ**,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար մեկ դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար մեկ դրամ**,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար մեկ դրամ**,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ութ հազար մեկ դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար մեկ դրամ**.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **հազար դրամ**

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **հազար յոթ հարյուր հիսուն դրամ**,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **յոթ հարյուր հիսուն դրամ**,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով,

11) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ**.

12) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **հինգ հազար դրամ**.

13) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ**.

14) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ**,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ**,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ միլիոն դրամ**,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **տասը միլիոն դրամ**(

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.՝ հազար դրամ

2) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.՝ հազար դրամ

3) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.՝ հազար դրամ

4) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **հինգ հարյուր դրամ** փոխհատուցման վճար:

5. համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. **հինգ հարյուր դրամ**

6. համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար

6.1 կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 100 դրամ, / թույլատրել չգանձելու բնակչության անապահով խավից/

բ.իրավաբանական անձանց համար ՝

-առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 50 դրամ/քառ.մ

-արտադրական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 5 դրամ/քառ.մ

-կրթական, առողջապահական, սպորտային շինություններ՝ 3 դրամ/քառ.մ

6.2. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000 դրամ:

7.համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող անասնաբուժական ծառայությունների համար տեղական վճար՝

| | | |
|---|---|---|
| 7<br>.7.1 | Ծննդօգնություն<br>1. թեթև միջամտություն<br>2. ծանր միջամտություն | **1000 դրամ**<br>**5000 դրամ** |
| 7.2 | Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների) | Մանր կենդանի **100դրամ**<br>Խոշոր կենդանի **200դրամ** |
| 7.3 | Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար | **100դրամ** |
| 7.4 | Ախտահանություն | 1 քառ. մետր **100դրամ** |
| 7.5 | Միջատազերծում (դեզինսեկցիա) | 1 քառ. մետր **100 դրամ** |
| 7.6 | Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) | 1 քառ. մետր **100 դրամ** |
| 7.7 | Արհեստական սերմնավորում | **5000 դրամ** |
| 7.8 | Կենդանու հերձում | մանր կենդանի **1000**<br>խոշոր կենդանի **3000** |
| 7.9 | Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից | Յուրաքանչյուր այցելությունը **500 դրամ** |
| 7.10 | Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից | մանր կենդանի **300**<br>խոշոր կենդանի **500** |

8. ոռոգման ջրի մատակարարման համար՝ 1000մ հողամասի համար՝ 500դրամ:՝

9. համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ մանկապարտեզի օրավարձ՝ հարյուր դրամ

10. համայնքային ենթակայության հանդիսությունների սրահը՝ ուրախության և տխրության արարողությունների ժամանակ օգտագործման տրամադրելու համար՝ մեկ օրվա համար 10/տասը/ հազ դրամ, երկու օրվա համար 15/տասնհինգ/ հազ դրամ վճար:

11.. տեղեկանք———երեք հարյուր դրամ/ թույլատրել չգանձելու բնակչության անապահով խավից/

12.. Լիազորագիր——հազար դրամ

13. Անասունների տեղեկանք /տրամադրել գնորդին վաճառված անասունի տեղափոխման համար/------հինգ հարյուր դրամ

14. Հողի քաղվածքի և հատակագծի փաստաթղթեր----հինգ հազար դրամ

15. Հացցե տրամադրել 1000 դրամ:

16.. Բնութագիր---------հազար դրամ

17.1 հա հողամասի վարելու համար—25000 դրամ

18.1 հա խոտհարքը հնձելու համար—15000 դրամ

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, հասցե գ. Լեռնապատ 27փ. 7/6
հեռախոս 0322 68781, էլ. փոստ Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 61–Ն

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18 հոդվածի 5 կետով

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2020թ.-ի Լեռնապատ համայնքի բյուջեն համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3' ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. .ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5 . ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

**Լեռնապատ համայնքի ղեկավար** **Ս. Աբազյան**

Հավելված

Լեռնապատ համայնքի ավագանու

24.12.2019թ.-ի N61-Ն որոշման

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| | | |
|---|---|---|
| ա. եկամուտների գծով | 60 438,2 | հազ դրամ |
| բ. ծախսերի գծով | 60 438,2 | հազ դրամ |
| գ. տարեսկզբի ազատ մնացորդ | -- | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱԲԱՋՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 62-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 06—ի Հայաստանի Հանրապետության Լոռ մարզի Լեռնապատ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփակա լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 17- որոշմանը համապատասխան և ստացված դիմումները՝ նորածինի ընտանիքի անդամի, հաշմանդա երեխաների ցուցակը, տարեց՝ 90 և ավելի տարեկան մեծահասակների ցուցակը, և սոցիալապես անապահ այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողո եզրակացությունը՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացն սոցիալական օգնություն՝ ըստ հավելվածի 1-ի, համայնքի հաշմանդամ երեխաների ծնողներին՝ ըստ հավելվ 2-ի. և .տարեց՝ 90 և ավելի տարեկան մեծահասակներին՝ ըստ հավելված 3-ի:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճար հատկացված գումարները:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3' ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. .ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5 . ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի ավագանու

2019 թվականի դեկտեմբերի 24-ի N62--Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Նորածինի ընտանիքներ՝

1.Աբազյան Գարիկ Գառնիկի 10/տասը հազ/դրամ
2. Աբազյան Նաիրա Արմենի 10/տասը հազ/դրամ

Ընդհամենը՝ 20/քսան /հազ դրամ

Սոցիալապես անապահով ընտանիքներ՝

1.Մարգարյան Դիվանա Մացակի 25 /քսանհինգ հազ դրամ
2.Ալոյան Արթուր Օնիկի 25 /քսանհինգ հազ դրամ
3.Դալլաքյան Համլետ Խաչիկի 25 /քսանհինգ հազ դրամ
4.Բաբայան Լյուդմիլա Սամվելի 25 /քսանհինգ հազ դրամ
5.Բասենցյան Մարինե Սերյոժայի 25 /քսանհինգ հազ դրամ
6.Աշրաֆյան Զեյֆիրա Հովսեփի 25 /քսանհինգ հազ դրամ
7.Հակոբջանյան Շողեր Սայադի 25 /քսանհինգ հազ դրամ
8.Թումազյան Սիրուն Եղյայի 25 /քսանհինգ հազ դրամ
9.Բաբայան Ազնիվ Ենոքի 25 /քսանհինգ հազ դրամ
10.Դալլաքյան Տաթևիկ Վոլոդյայի 25 /քսանհինգ հազ դրամ
11. Ալոյան Ռիմա Ասատուրի 25 /քսանհինգ հազ դրամ

Ընդհամենը՝ 275 / երկու հարյուր յոթանասունհինգ /հազ դրամ

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

**Հավելված 2**

**ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի ավագանու**

**2019 թվականի դեկտեմբերի 24-ի N62--Ա որոշման**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՑՈՒՑԱԿ

| N: | Անուն Ազգանուն Հայրանուն | գումարը ՀՀ դրամ | անձնագրի համարը |
|---|---|---|---|
| 1 | Բարսյան Լիլիթ Ռոբերտի<br>/Բաբայան Մարիամ Մերանի մայրը/ | 15000 | 002869428 |
| 2 | Ղումաշյան Հայկանուշ Միշիկի<br>/Աշրաֆյան Գոհարիկ Արամայիսի մայրը/ | 15000 | 004638011 |
| 3 | Թումանյան Արմինե Մեսիկի<br>/Թումանյան Ռուբեն Ռոբերտի մայրը / | 15000 | AH0415629 |
| 4 | Միտիչյան Արմինե Ղարիբի<br>/Միրաղեղյան Աստղիկ Կարենի մայրը/ | 15000 | 007477086 |
| 5 | Բաղեյան Մարինե Սերյոժայի<br>Մելքոնյան Մանե Սարգսի մայրը/ | 15000 | AF0676049 |
| 6 | Թումանյան Կարինե Գուրգենի /Զարգարյան Արշակ Գագիկի մայրը/ | 15000 | 002718492 |
| 7 | Արազյան Արսեն Շավարշի<br>Արազյան Տիգրան Արսենի հայրը/ | 15000 | AK0436384 |
| 8. | Բաբայան Արիստակես Արարատի<br>/ Բաբայան Լյուդմիլա Արիստակեսի հայրը/ | 15000 | AF0261965 |
| 9. | Դալլաքյան Ռոման Համլետի<br>/Դալլաքյան Համլետ Ռոմանի հայրը/ | 15000 | AS 0337884 |
| | ընդհամենը | 135000 | հարյուր երեսունհինգ հազար դրամ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված 3

ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի ավագանու

2019 թվականի դեկտեմբերի 24-ի N62--Ա որոշման

ՏԱՐԵՑ ՝ 90 ԵՎ ԱՎԵԼԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՑՈՒՑԱԿ

| հ/հ | Անուն | Ազգանուն | Հայրանուն | Ծնն, թիվ | հասցե | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԱԲՐԱՀԱՄ | ՊԱՊԻԼՅԱՆ | ՄՈՒՄՐԱՏԻ | 30-07-25 | 24 Փ. 6 Տ | 25000 |
| 2 | ՆԱԽՇՈՒՆ | ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ | ԲԱՐՍԵՂԻ | 28-07-27 | 17 Փ 23 Տ | 25000 |
| 3 | ԱԴԱՄԿԱ | ՂԱՐԱՂԱՇՅԱՆ | ՄԵԼԻՔԻ | 31-08-27 | 8 Փ.10 Տ | 25000 |
| 4 | ԱՐԵՎՀԱՏ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | ԱԼԵՔՍԱՆԻ | 15-09-28 | 5 Փ.4 Տ | 25000 |
| 5 | ՖԵԼԻՑԱ | ԱԲԱՋՅԱՆ | ՍԻՄՈՆԻ | 21-10-28 | 24 Փ.1 Տ | 25000 |
| 6 | ԼԻԴԱ | ԶԱՐԳԱՐՅԱՆ | ԱՍԱՏՈՒՐԻ | 02-11-28 | 32 Փ.2 Տ | 25000 |
| 7 | ՄԱՐԳՈ | ՄԱԼԽԱՍՅԱՆ | ԳԱՐԵԳՆԻ | 28/11/1929 | 7 Փ. 14 Տ | 25000 |

Ընդհամենը՝ 175 000/ հարյուրյոթանասունհինգ հազ /դրամ

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
22, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N63 -Ա

## ԼԵՌՆԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով ,<<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և 26-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Լեռնապատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխան դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար սահմանել հավելավճար՝ տվյալ պաշտոնի ենթախմբի համար համայնքի ավագանու որոշմամբ հաստատված դրույքաչափի 5 % -ի չափով:

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3' ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. .ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5 . ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
22, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, ,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N64 -Ա

## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18 հոդվածի 16 կետով և հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ Նաիրա Վոլոդյայի Հակոբյանին <<ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու:

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 65_Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-041-0022-0001 ԾԱԾԿԱԳՐԻՑ 0,10039 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-իթիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետով, Լեռնապատ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականությունը հանդիսացող 06-041-0022-0001 ծածկագրով 0,10039 հա բնակավայրերի այլ հողերից նպատակային նշանակությունը բնակավայրերի, բնակելի կառուցապատման փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 66_Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-041-0022-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,1994 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի ‹‹Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին›› թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետով, Լեռնապատ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականությունը հանդիսացող 06-041-0022-0001 ծածկագրից առանձնացված 0,1994 հա բնակավայրերի այլ հողերից նպատակային նշանակությունը բնակավայրերի, բնակելի կառուցապատման փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԱՔՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱՐԱՔՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. .ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱՔՅԱՆ